

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման մարզային հանձնաժողովի նիստի

ք. Հրազդան

12.06.2014թ.

Մասնակցում էին՝

1. Ա.Ղազարյան Կոտայքի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
2. Գ.Գրիգորյան Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
3. Գ.Մարտիրոսյան Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, անդամ
4. Ա.Հակոբյան Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ, անդամ
5. Ռ.Ներսեսյան Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ, անդամ
6. Ա.Ասատրյան Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ, անդամ

## Քննարկվեց՝

Մարզի Եղվարդ, Ջրաբեր, Սուլակ, Ողջաբերդ, Ջովունի, Հանքավան, Պտղնի և Առինջ համայնքների արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման համայնքային հանձնաժողովների կողմից կազմված 2014 թվականին ուժեղ քամուց շենք, շինություններին պատճառված վնասի չափի մասին ակտերի քննարկում:

(գեկուցող՝ Կոտայքի մարզպետի տեղակալ Ա.Ղազարյան)


## Ընդունվեց ի գիտություն՝

Հավանություն տրվեց համայնքների հանձնաժողովների կազմած ակտերին:

## Հանձնաժողովին հանձնարարվեց՝

Համայնքների հանձնաժողովների կողմից կազմված ակտերն ուղարկել <<<< արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման հանրապետական հանձնաժողովին>>:

<< Կոտայքի մարզպետի տեղակալ՝



Ա.Ղազարյան